ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

ներում» ու կառավարում են, ինչ են ցանկանում: Ցանկանում են գլխատել Հայաստանը, ցանկանում են մեր երկիրը ոչխարների բնակատեղի՞ դարձնել: Ամերիկային էլ, ամեն տեսակ միջազգային ֆոնդերին ու բանկերին էլ հենց դա է պետք, որ այստեղ անգրագետներ ապրեն, քանզի որքան մարդն անգրագետ է, այնքան հեշտ է նրան կամակատար դարձնել:

ԱՆԻՉԿԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ գիտքարտուղար

-Կոնկրետ մեր ինստիտուտի շուրջ 100 աշխատակիցներն աշխատավարձ չեն ստանում արդեն մեկ տարուց ավելի: Միաժամանակ ինստիտուտին չեն հատկացվել էլեկտրաէներգիայի վճարները մուծելու, աշխատանքի համար անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու համար նախատեսված գումարները: Եվ դա արվում է մի ինստիտուտի նկատմամբ, որն զբաղվում է կենսատեխնոլոգիայով՝ 21-րդ դարի գիտությամբ: Կառավարությունից պահանջում ենք անհապաղ վճարել Եւ աշխատավարձը, Եւ մյուս գումարները: Մեր համբերությունն արդեն սպառվել է եւ այսպես այլեւս անհնար է շարունակել:



ՌԱՖԱԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Երկրաբանության ԳՀԻ փոխտնօրեն

-Գիտության նկատմամբ իշխանությունների մինչ այժմ եղած անընդունելի վերաբերմունքը անհրաժեշտ է արմատապես փոխել: Եթե չլինի այդ փոփոխությունը, կնշանակի ողջ հայ ժողովրդին տանել կործանման: Գիտությունը պետք է ֆինանսավորվի բյուջեի առանձին հոդվածով եւ այնպիսի ծավալներով, որ թե՛ զուտ գիտական (տեսական), թե՛ գործնական նշանակության աշխատանքները կատարվեն:

Գիտությունների դոկտորի աշխատավարձը 15-20 հազար դրամ է: Դա աշխատավա՞րձ է, թե՞ ծաղր:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՂԱՐԱԳԵՈԶՅԱՆ
ԳԱԱ ակադեմիկոս, մոլեկուլյար կենսաբանության ԳՀԻ տնօրեն

-Պարտքս եմ համարել գալ այստեղ եւ իմ բողոքը հայտնել այն խայտառակ վիճակի վերաբերյալ, որում հայտնվել են երկրի գիտական հիմնարկներն ու գիտնականները: Հինգ ամիս է, ինչ գիտնականներին չի տրվում, ժողովրդական լեզվով ասած, աղքատավարձը: Սա ուղղակի ամենաանհանդուրժելի քաղաքականությունն է, որն ուղղված է գիտությունը վերջնականապես տապալելուն: Առանց գիտության ոչ մի երկիր գոյություն ունենալ չի կարող, մանավանդ այն երկիրը, որի ղեկավարներն ամեն քայլափոխի օգտագործում են «քաղաքակիրթ ազգ, քաղաքակիրթ պետություն» բառերը:

Աժ նաեւ գիտության հանձնաժողովի նախագահ Շավարշ Քոչարյանը, որը մեր ինստիտուտի սանն է ու գիտնական, թող չմոռանա այն հավանականությունը, որ վերին ատյաններում իր ներկայությունը ժամանակավոր է, եւ հետո նա գալու է նորից ինստիտուտ, գուցեեւ իր համար համապատասխան տեղ է խնդրելու:

Ասում են, որ հնարավորություն չի եղել: Գիտեմ, իհարկե, որ հնարավորությունները շատ սուղ են: Գիտեմ նաեւ, որ ցանկանում են տալ այդ գումարները: Ֆինանսների նոր նախարարը բավական լավ հասկանում է խնդիրը եւ որոշակիորեն օգնեց այս հարցում: Արդեն օգոստոսի աշխատավարձի գումարը հատկացրել են եւ խոստացել են այս ամիս վճարել նաեւ սեպտեմբերի աշխատավարձերը: Բայց մյուս երեք ամսվա աշխատավարձը չեն կարող վճարել, որովհետեւ այդ ողջ ֆինանսավորումը «այլ ծախսեր» հոդվածի տակ է: Իսկ դա բյուջեի պաշտպանված հոդված չէ:

Գիտե՞ք, գիտնականներն արդեն մի քանի անգամ ցույցի ելնելու ցանկություն են ունեցել, բայց ես կանգնեցրել եմ նրանց, որովհետեւ համոզված էի, թե դրությունը կկարգավորվի: Բայց չեմ կարող խոստանալ մի բան ու չկատարել խոստումս:

Հիմա, երբ տարվա ավարտին 15 օր է մնում, չեմ հավատում, որ 4 ամսվա աշխատավարձերը կտան:

Պետբյուջեով նախատեսված 2,6 միլիարդ գումարից փաստացի ստացել ենք միայն 40 տոկոսը:

-Մնացած միջոցները ճանաչվե՞լ են պետական պարտք:

-Նման որոշում չկա, չնայած որ այդ հարցը եւս տասնյակ անգամներ բարձրացվել է մեր կողմից:

Անշուշտ, խնդիրը միայն աշխատավարձերը չեն, եւ մի շարք այլ, ոչ պակաս կարեւոր հարցեր էլ կան, որոնց եւս անդրադարձանք Ֆ.Սարգսյանի հետ զրույցի ժամանակ: ԳԱԱ նախագահը նշեց նաեւ, որ «Գիտության եւ գիտական քաղաքականության մասին» օրենքը ուժի մեջ մտնելուց հետո էապես կբարելավվի հայրենի գիտության վիճակը: Մի բան, որ կզգացվի արդեն 2002 թվականից:

Բայց մինչ այդ դեռ ապրել է պետք:

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Ասել կուզի՝ պետք է պաշտպանել գիտությունը: Իսկ ես ոչ մի նշան չեմ տեսնում, որ Շավարշ Քոչարյանն այդ ուղղությամբ քայլեր է անում:

ԱՔԱՏ ՆՈՐԱՎՅԱՆ
ԳԱԱ թղթակից-անդամ, նուրբ օրգանական քիմիայի ԳՀԻ լաբորատորիայի վարիչ

-Հասկանում ենք, իհարկե, որ բյուջեն ճեղքվածք ունի, բայց ինչո՞ւ պիտի գիտնականներն այս վիճակին հասնեն: Դուք միայն պատկերացրեք, գիտնականների, գիտաշխատողների աշխատավարձերը Հայաստանի բյուջեում նշված են «այլ ծախսեր» տողում: Պարզվում է, որ մենք ոչ թե գիտնականներ ենք, այլ՝ «այլ ծախսեր»: Իմ կարծիքով, նման ձեւակերպումը պետության վերաբերմունքի, ավելի ճիշտ՝ գիտության նկատմամբ վերաբերմունքի բացակայության ապացույց է: Հիմա մեկ շաբաթ մտածելու ժամանակ ենք տվել կառավարությանը: Տեսնենք՝ կմտածե՞ն: Բայց աշխատավարձը չէ միայն խնդիրը: Գիտությունը պահանջում է հիմնախնդրի արմատական լուծում:

Հայրենի գիտության համակարգում ստեղծված անտանելի իրավիճակին վերաբերող հարցերով «Հայոց Աշխարհ»-ի թղթակիցը երեկ դիմեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ՖԱՂԵՑ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

-Դուք պատրա՞ստ էիք կանգնել բողոքի ցույցի ելած գիտնականների կողքին: Ինչ քայլեր է ձեռնարկել ԳԱԱ նախագահությունը իրավիճակը շտկելու համար:

-Եթե կանգնած չենք, էլ որտե՞ղ ենք հապա: Այն, ինչ-որ գիտնականները ասում էին այստեղ, նույնը եւ ավելին ես ասում եմ Եւ կառավարությունում, Եւ Ազգային ժողովում, որտեղ տասնյակ անգամ այդ հարցը դրվել է: Եվ խորհրդարանում ունեցած վերջին ելույթում էլ այդ ամենը ասացի ու բավական խիստ ձեւով: Եվ վարչապետի, Եւ ֆիննախարարի հետ այս մասին շատ խոսակցություններ են եղել, իսկ պաշտոնական նամակներ գրվել են մեկը մյուսի հետեւից:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

Նախնական պայմանավորվածության համաձայն, դեկտեմբերի 15-ին հայ-նախիջեւանյան սահմանագծի երասխի հատվածում կայացավ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակի, հրադադարի ռեժիմի ամրապնդմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հարցեր: Այս մասին հայտնեցին ՀՀ ՊՆ լրատվության ու քարոզչության վարչությունում:

Պաշպանության նախարարները պայմանավորվել են քայլեր ձեռնարկել սահմանային միջադեպերի բացառման, սահմանում կայուն իրավիճակի հաստատման ուղղությամբ: Որոշվել է երկու նախարարների միջեւ պահպանել օպերատիվ կապ՝ հնարավոր միջադեպերին արագ արձագանքելու նպատակով: Կարեւորվել է նաեւ սահմանային զորամասերի հրամանատարների միջեւ կապի՝ որպես սահմանային միջադեպերի կանխման միջոցի, հաստատումը: Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարները տվյալներ են փոխանակել ռազմագերիների վերաբերյալ:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԿԱՇԱՌՔ ՎԵՐՑՆԵԼԻՍ

Երեկ Մոսկվայում 8000 ամերիկյան դոլար կաշառք վերցնելիս ձերբակալվել է ՌԴ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետհամալսարանին առընթեր մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Սամվել Գրիգորյանը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԿԱՐՈՂ Է ՁԵՌՔԻՑ ԲԱՑ ԹՈՂՆԵԼ

Բաքվում ընդունելով Թուրքիայի ԱԳ եւ էներգետիկայի նախարարությունների համատեղ պատվիրակությանը, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը հայտարարել է, որ Թուրքիան կարող է ձեռքից բաց թողնել Ադրբեջանից բնական գազ գնելու հնարավորությունը: Նա դժգոհել է Թուրքիայի տարածքով գազատարի կառուցման նախագծի շարունակական ձգձգումից: «Տրանսկասպյան նախագծում պրոբլեմներ կան: Եթե մեր առաջարկները ձախողվեն, մենք կվերակողմնորոշվենք դեպի հարավ»,- ասել է Ալիեւը՝ ակնարկելով իրանական երթուղին: Խնդրի քննարկումը շարունակելու համար մոտ օրերս Թուրքիա կժամանի Ադրբեջանի պետական նավթային ընկերության պատվիրակությունը:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՎԱՆԱԿԱՆ Է

Խորհրդարանում տարածված լուրերի համաձայն, «Կայունություն» պատգամավորական խմբի անդամների մեծ մասը հակված է խմբի լուծարմանը: Նշվում է, որ «Կայունության» մի հատվածի հիմքի վրա կարող է ձեւավորվել «Ժողովրդավարներ» անվամբ նոր պատգամավորական խումբ, որը հավանաբար կգլխավորի «Կայունության» ներկայիս քարտուղար, Աժ պատգամավոր Կարեն Կարապետյանը:

Հիշեցնենք, որ Աժ կանոնակարգում տեղի ունեցած վերջին փոփոխությունների համաձայն, խորհրդարանում խումբ ձեւավորելու համար անհրաժեշտ է 7 պատգամավորի մասնակցություն, թեեւ նախկինում խմբերը ձեւավորվում էին առնվազն 10 պատգամավորի համախմբմամբ:

Սեփ. լրտվ.